


10643

ՄԻԽԱՅԼՈՎ

ԿՈՄՍՈՄՈՂԻ
ԱՇԽԱՏԱՆՔԸ
ԴՊՐՈՑՈՒՄ



ԿՈՄԻՏԵՑԻ ԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱԲԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1940

38885

Մ-69 Ս. ՄԻԽԱՅԼՈՎ

24 SEP 2006

1 DEC 2009

UY

ԿՈՄՍՈՄՈՒԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ
ԴՊՐՈՑՈՒՄ

(Զեկուցում ՀամլկՅՅԵՄ Կենտրոնի
X պլենումում
1939 թ. դեկտեմբերի 19-ին)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ ● 1940

28 JUN 2013

10643



2541
40

Н. А. МИХАЙЛОВ
О РАБОТЕ КОМСОМОЛА В ШКОЛЕ
(Доклад на X пленуме ЦК ВЛКСМ
19 декабря 1939 г.)

Государственное издательство
политической литературы
Ереван ● 1940

ԿՈՄՍՈՍՈՒԼԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Համ Կ(բ)Կ XVIII համադումարում
տված հաշվետու զեկուցման մեջ ընկեր
Ստալինը մատնանչեց, վոր կուսակցության
XVII և XVIII համադումարների միջև ըն-
կած ժամանակաշրջանը յեղել և իսկական
կուլտուրական հեղափոխության ժամանա-
կաշրջան: Մեզ մոտ կյանքում իրականաց-
ված և ընդհանուր տարրական կրթությունը
ԽՍՀՄ ժողովուրդների լեզուներով: Աճել և
բուրբ աստիճանների դպրոցների ցանցը,
աճել և աչակերտության թիվը և բարձրա-
դույն ուսումնական հաստատություններն
ալբարտող մասնագետների թիվը: Ստեղծ-
ված և ամրապնդված և նոր, խորհրդային
ինտելիգենցիա:

Պորճրդային զպրոցի չտեսնված անու-
մըն ու ամբապնդումը բնութագրվում են հե-
տեյալ թվերով: Տարբական, վոչ-լրելվ միջ-
նակարդ և միջնակարդ զպրոցների աշա-
կերտության թիվը 21, 3 միլիոնից բարձրա-
ցել-հասել և 29, 4 միլիոնի: Ըստվորում
հարկավոր և նշել, վոր 5—7—րդ դասարան-
ների աշակերտության թիվը կրկնապատկե-
վել և, իսկ 8—10—րդ դասարանների աշա-
կերտության թիվն ավելացել և 15 անգամ:
Բարձրագույն ուսումնական հաստատու-
թյուններում սովորողների թիվն այժմ
կազմում և մոտ 550 հազար: Ժողովրդա-
կան կրթության այսպիսի թափ, զպրոցի
այսպիսի վերելք չի ունեցել և չլիտի աշ-
խարհի վոչ մի յերկիր:

Մեր կուսակցության և կառավարու-
թյան վերաբերմունքը զեպի զպրոցը, նրա
խնդիրները և ուղիները սպառնչ կերպով
վորոշված են ՀամԿ(բ)Կ ծրագրի մեջ:

«Զպրոցը վոչ միայն պետք և լինի առ-
հասարակ կոմունիզմի սկզբունքների հա-

զորդիչը, այլև պրոլետարիատի դադախա-
րական, կազմակերպական, դաստիարակչա-
կան ազդեցությունն աշխատավոր մասսա-
ների կիսապրոլետարական և վոչ-պրոլետա-
րական խավերին հազորդոյը՝ կոմունիզմը
վերջնականապես հաստատելու ընդունակ
սերունդ դաստիարակելու նպատակով»:

Քննադատելով հին զպրոցը, Վլադիմիր
Իլյիչ Լենինը հեղնորեն ծաղրում էր կա-
պիտալիստների և նրանց «գիտնական»
սոցասովորների յերեսպաշտությունը, սպա-
սավորներ, վորոնք պնդում էին, թե իբր
զպրոցն անկախ մի որդան և, վորը կանդ-
նած և քաղաքականությունից դուրս, դա-
սակարգային պայքարից դուրս:

Լենինը կոչ էր անում «...հասկանալ,
վոր հին ուսումը, հին սերտումը, հին խոս-
տությամբ վարժեցնելը պետք և փոխարի-
նենք մարդկային դիտությունների վոյջ
պաշարը մեզ վերցնելու կարողությամբ և
վերցնենք այնպես, վոր կոմունիզմը ձեզ
համար ինչ-վոր սերտած բան չլինի, այլ

դառնա ձեր մտածածը, այն յեզրակացութիւնները, վորոնք անխուսափելի յեն ժամանակակից կրթութեան տեսակետով»:

Այդպիսի հարցադրումը նշանակում էր, վոր նոր դպրոցը պետք է սովորեցնէ ու դաստիարակէ մի սերունդ, վորն ընդունակ է առաջ շարժելու կոմունիզմի դործը:

Յուշեիկներէ կուսակցութեանը հաստատակամորեն և հետևողականորեն իրականացնում է խորհրդային դպրոցի զարգացման ծրագիրը: Հոկտեմբերյան Սոցիալիստական հեղափոխութեան մյուս օրն արդեն հրապարակվեց Վ. Ի. Լենինի ստորագրած դեկրետը՝ յեկեղեցին պետութեանից և դպրոցը յեկեղեցուց անջատելու մասին, դասային, կաստային դպրոցները լիկվիւրացիայի յենթարկելու մասին: Լենինյան դեկրետը ջարդեց հին բուրժուական դպրոցը և դրեց նոր, խորհրդային դպրոցի ստեղծման սկիզբը:

Կատարելով Լենինի ցուցումներն ուսուցչի մասին, կուսակցութեանն ստեղծելու դաստիարակել և իսկական ժողովրդա-

կան ուսուցչութեան բաղմահազար բանակ, վորը հիմնական մասսայով ամբողջ սրտով նվիրված է խորհրդային յերկրի աշխատավորների մեծ դործին, կոմունիզմի դործին: Մեր խորհրդային ուսուցչութեանը, նրա հին և նոր կազմերը, — առաջավոր իրենց գաղափարական համոզվածութեամբ, բարձր կուլտուրայի տեր, — վայելում է ժողովրդի խորը հարգանքն ու սերը:

խորհրդային իշխանութեան տարիներէ ընթացքում կուսակցութեանն ու կառավարութեանն անհափելիորեն բարձրացրել են դպրոցի նյութական բաղան: Միայն անցած հնդամյակում մեզ մոտ կառուցվեց ավելի քան քսան հազար դպրոց, բացված են հազարավոր արտադպրոցական հաստատութիւններ, ղիտա-հետադոտական ինստիտուտներ, մանկավարժական բուհեր և ուսումնարաններ:

Մեր դպրոցի ամրապնդման համար բացառիկ նշանակութիւն ունեցան Համ. Կ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի պատմական վորջումները:

Այդ վորոշումները քարը քարի վրա չթողին դպրոցի մահացման, մանկաբանութեան կեղծ դիտութեան վերաբերյալ թշնամական, հակալեւինյան թեորիաներից:

Ընկեր Ստալինի ղեկավարութեամբ կուսակցութեանը ջախջախեց աջ-ձախիկ պրոֆեկտայրներին, տրոցկիստական - բուխարինական գործակալներին, վորոնք խրջկըվել էին լուսժողկոմատները և ժողովրդական կրթութեան տեղական որգանների մեջ ու վորձում էին արգելակել դպրոցի զարգացումը, խեղաթյուրել աճող սերունդի կոմունիստական դաստիարակութեան սկզբունքները:

Զգալիորեն բարձրացել է դպրոցի աշխատանքի վորակը: Ստալինյան Կենտրոնական Կոմիտեյի և խորհրդային կառավարութեան ղեկավարութեամբ ու անմիջական մասնակցութեամբ կազմվել են նոր դասադրքեր և ծրագրեր, վորոնք ողնեցին բարելավելու դաստիարակումը, բարձրացնելու պարագմունքների դազափարական բովանդակութեանը:

Այս ամենի հետևանքով մենք այժմ ունենք միանգամայն նոր, խորհրդային, սոցիալիստական դպրոց, վորն ամբողջովին կոչված է ծառայելու կոմունիզմին, ծառայելու բոլոր աշխատավորներին, կապիտալիզմի ճնշումից ազատադրելուն:

Բնական է, վոր խորհրդային դպրոցը, ինչպես նաև մեր ամբողջ պետութեանը, կանգ չառավ և կանգ չի առնում ձեռք բերվածի վրա: Համ Կ(բ)Կ XVІІІ համագումարը պահանջեց յերբորդ հնդամյակում իրականացնել բնդհանուր միջնակարդ ուսուցումը քաղաքում և ալարտել ընդհանուր յոթնամյա միջնակարդ ուսուցումը դյուզում և սոլգային հանրապետութեաններում: Տարրական և միջնակարդ դպրոցների աշակերտութեան թիվը քաղաքներում և բանվորական ալաններում՝ 8,6 միլիոն մարդուց պետք է հասցնել 12,4 միլիոն մարդու, իսկ դյուզական վայրերում—20,8 միլիոնից՝ 27,7 միլիոնի: Յերբորդ հնդամյակում մեր դպրոցներում պետք է սոլորեն ալելի քան 40 միլիոն յերեխա:

Դպրոցի հետագա ամբարշտման, նրա աշխատանքն ամեն կերպ բարելավելու համար մղվող սլաքբարե խնդիրները վոչ մի դեպքում չի կարելի դիտել պետութեան խնդիրներից մեկուսացված :

Համ Կ(բ)Կ XVIIII համադրումարում ընկեր Ստալինը տվեց պետութեան վաղուց դիտական բնորոշումը սոցիալիզմից կոմունիզմին անցնելու ժամանակաշրջանում : Ընկեր Ստալինը հետեցրեց Խորհրդային պետութեան զարգացման յերկու Փազ. առաջին Փազը Հոկտեմբերյան հեղափոխութեանից մինչև չահագործող դասակարգերի վերացումն ընկած ժամանակաշրջանն է, յերկրորդ Փազը քաղաքի և դյուղի կապիտալիստական տարրերի լիկվիդացիայից մինչև անտեսութեան սոցիալիստական սիստեմի լիակատար հաղթանակը և նոր Սահմանադրութեան ընդունելն ընկած ժամանակաշրջանն է :

Մեզ մոտ վերջնականապես հաստատվել են և անբաժանելիորեն տիրապետում են անտեսութեան սոցիալիստական ձևերը,

սոցիալիստական սեփականութիւնը, աշխատանքի սոցիալիստական կազմակերպումը : Մենք մտել ենք զարգացման նոր շրջան, սոցիալիստական հասարակութեան կառուցումն ավարտելու և սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու շրջանը :

Սոցիալիստական պետութեան զարգացման մեջ յեղած նոր ետապը մեր առաջ նոր խնդիրներ է դնում :

Սոցիալիստական պետութեան յերկրորդ Փազում պահպանվեց և լիովին զարգացավ անտեսական-կազմակերպչական և կուլտուրական-դաստիարակչական աշխատանքի Փունկցիան : Այժմ ծանրութեան կենտրոնը փոխադրվում է կոմունիստական դաստիարակութեան հարցերի վրա, մարդկանց անդաստիարակ հասարակութիւն կառուցողների դիտակցութեան միջից կապիտալիզմի մնացուկների լիկվիդացիայի վրա :

Յերկրորդ Փազում լիովին պահպանվեց յերկրի ռազմական պաշտպանութեան Փունկցիան դրա հարձակումներից, վորը

պահանջում եւ ամեն կերպ ամբաստնողել կար-
միր բանակն ու Ռազմա-ծովային նաւա-
տորժը, պատժիչ սրզանները և հետախու-
զութիւնը:

Համադումարից հետո անցած տասն
ամիսը և ատանձնապէս միջազգային վերջին
դեպքերը հաստատեցին ընկեր Ստալինի
գրույթներէ ամբողջ հանճարեղութիւնը:

Տնտեսական-կազմակերպչական և կուլ-
տուրական-դաստիարակչական աշխատանքի
Ֆունկցիան, յերկրի ռազմական պաշտպա-
նության Ֆունկցիան, ինչպէս և սոցիալիս-
տական սեփականութիւնը զոգերից ու հա-
փըշտակիչներէ պաշտպանելու Ֆունկցիան
բղխում են մեր պետութեան զարգացման
նոր ժամանակաշրջանի գլխաւոր խնդրից—
ամբողջ յերկրում սոցիալիստական տնտե-
սութիւն կազմակերպելու և կապիտալիս-
տական տարրերի վերջին մնացորդները լիկ-
վիզացիայի յենթարկելու խնդրից, կուլ-
տուրական հեղափոխութիւն կազմակերպե-
լու, յերկրի պաշտպանութեան համար մի-

անգամայն ժամանակակից բանակ կազմա-
կերպելու խնդրից:

Ընկեր Ստալինի ուսմունքը մեկ յերկ-
րում կոմունիզմի հաղթանակի մասին, սո-
ցիալիզմից կոմունիզմին անցնելու ժամա-
նակաշրջանի պետութեան մասին՝ դադա-
վարապէս զինում եւ մեղ և պահանջում,
վորպեսզի կոմսոմոլը, դպրոցի աշխատող-
ներն այդ ուսմունքից անեն բոլոր յեղբա-
կացութիւնները, վորպեսզի նրանք բոլշևի-
կոբն իրազորեն այդ ուսմունքը պրակ-
տիկայում: Իսկական լենինյան-ստալինյան
և նա, ով վոչ միայն ընդունում եւ մարք-
սիստական-լենինյան ուսմունքը, այլև պայ-
քարում եւ այդ ուսմունքի հաղթանակի հա-
մար, այն կիրառում եւ կյանքում:

Յերրորդ հնդամյակի հիմնական խըն-
դիրները լուծելու, սոցիալիստական պե-
տութեան հիմնական Ֆունկցիաները նոր
ժամանակաշրջանում կենսագործելու հետ
դպրոցն ունի ուղղակի, անմիջական առն-
չութիւն: Պետութեան հետազա ամբա-
պնդման, առանց վորի աներևակայելի յե

կոմունիզմի լիակատար հաղթանակը, և
դպրոցի միջև գոյություն ունի ուղղակի,
անխզելի կապ: Դպրոցի ամբաստնուածը պե-
տական կարևորագույն խնդիր է:

Մոցիալիստական պետութեան զարգաց-
ման նոր պայմաններում վիթխարիորեն
բարձրանում է ինտելիգենցիայի դերը: Վոչ
թե յերկնային թաղավորի տիմարները կա-
րող են ուզել աշխատավորներին պայքարե-
լու հանուն կոմունիզմի վերջնական հաղ-
թանակի, այլ բազմակողմանիորեն կըրթ-
ված, մինչև ուզն ու ծուծը Լենինի—Ստա-
լինի կուսակցութեան գործին նվիրված
մարդիկ, վորոնք կարող են բուլչեիկորեն
աշխատել, բուլչեիկորեն պայքարել հանուն
կուլտուրայի և աշխատավորների կոմունիս-
տական գիտակցականութեան վերելքի: Այժմ
գործը վճռում են կադրերը, մարդիկ, վո-
րոնք յուրացրել են տեխնիկան, յուրացրել
են կուլտուրան, վորոնք գլխավորում են
կոմունիզմի հաղթանակի համար աշխատա-
վորներին մղած պայքարը:

Մեր կուսակցութեանը վորակելի՞ց

պետք է ստանա այդ կադրերը: Նշանակա-
լից չափով յերկտասարդութեան միջից, այն
յերկտասարդութեան, վորը սովորում է
միջնակարգ դպրոցում և վորն այստեղ
պետք է ստանա առաջին պատրաստութեու-
նը՝ պայքարելու կոմունիզմի համար, աշ-
խատելու ամեն մի բնագավառում, վոր
նրան կհանձնարարեն կուսակցութեանն ու
կառավարութեանը:

Ընկեր Մոսալինի ուսմունքը պետութեան
մասին պահանջում է ամբաստնուած մեր հայ-
րենիքի պաշտպանունակութեանը: Ընդհա-
նուր վիճակի պարտականութեան որեն-
քով սահմանված է, վոր Կարմիր բանակ են
կրանչվում 18 տարեկան հասակ ունեցող
անձերը: Կարմիր բանակի և Ռազմա-ծո-
վային նավատորմի շարքերն այսուհետև
համալրվելու յեն նշանակալից չափով տաս-
նամյակը հենց նոր ավարտած մարդկան-
ցով: Տասնամյակն ավարտած շատ յերկ-
տասարդներ գնում են գիտական ուսում-
նարաններում սովորելու: Դուրս է դալիս,
վոր Կարմիր բանակի և Ռազմա-ծովային

նախատորմի շարքերը բարձրագույններն պատրաստված մարտիկներով և հրամանատարներով համալրելու հետ ել զպրոցն ամենամեծից անհատներն ունի :

XVIII համալուծարի կողմից ընդունված Համ Կ(բ)Կ կանոնադրության համաձայն կուսակցության թիկնածու կարող են ընդունվել 18 տարեկան հասակի հասած անձերը: Այլ հասակում աշակերտները սովորաբար ավարտում են տասերորդ դասարանը: Այս տարի արդեն միքանի աշակերտներ, վորոնք իրենց ցուցարեբցին քաղաքական և զործարար տեսակետից, զպրոցն ավարտելիս բոլշևիկյան կուսակցության թիկնածուներ եյին: Հետագայում, աշխատավորներին կոմունիստական գիտակցականության աճման հետ, 18 տարեկան հասակի անաջափոր յերիտասարդության մեջ գեպի կուսակցության շարքերը յեղած ձգտումը կաճի: Դուրս է գալիս, վոր այս հարցի նկատմամբ ել—կուսակցության շարքերը բոլշևիկի բարձր կոչումն արգարացնելու ընդունակ յերիտասարդության անաջափոր

մասի հաշվին համալրելու զործում զպրոցն ունի ամենաուղղակի անհատներն:

Վերջապես, կա մի կարևոր հանգամանք ևս, վորը մենք չենք կարող հաշվի չառնել զպրոցի հարցը քննարկելիս: Սուքն այն մասին է, վոր մեզ ժող զպրոցներում սովորում են 35 միլիոն մարդ: Այլ խոսքերով, սովորողների թիվը կազմում է մեր յերկրի բնակչության մեկ հինգերորդից ավելին և համարյա հավասար է այնպիսի յերկրի բնակչությանը, ինչպիսին Փրանսիան է:

Վորն է յեզրակացութունը: Յեզրակացութունն այն է, վոր ՀամԿ(բ)Կ XVIII համագումարի վորոշումները, ընկեր Ստալինի ուսմունքը պետութան և ինտելիգենցիայի մասին՝ խորհրդային զպրոցի առաջ բացին նոր սքանչելի ետապ, բարձրացրին նրա սկզբունքային նշանակութունը բանվորների և զյուղացիների սոցիալիստական պետութան սիստեմում:

Այս ումենը պահանջում է վճռականորեն ամրապնդել զպրոցը, ուժեղացնել

2541
40

ուշադրութիւնը նրա նկատմամբ, ամբողջ
կոմսոմոլի շրջադարձ կատարել ղեպի դըս-
րոցը: Ամբողջ կոմսոմոլին շրջել ղե-
պի դպրոցի աշխատանքը—այժմ այսպես
է դըված հարցը: Յեւ վ այդ պետք է կազմել
այս պլենումի դլխավոր խնդիրը, կոմսոմոլի
կազմակերպութիւնների դլխավոր խնդիրը
մոտակա ժամանակամիջոցում:

Մենք արդոք կարո՞ղ ենք պնդել, վոր
կոմսոմոլում հասկացել են այս, և վոչ մի-
այն հասկացել, այլև դրանից արել են ան-
հրաժեշտ յեղրակացութիւններ: Դժբախ-
տաբար, այդ պնդել չի կարելի: Մեր ամե-
նամեծ թերութիւնն էլ հենց այն է, վոր
կոմսոմոլում չկա իսկական ուշադրութիւն
ղեպի դպրոցը: Դեռ ավելին—կոմսոմոլում
գոյութիւն ունի դպրոցում կատարելիք
աշխատանքի բացահայտ թերազնահատում,
վորը վնասակար է սոցիալիստական պետու-
թյան համար: Կոմսոմոլի կազմակերպու-
թիւնները դպրոցում տարվելիք աշխատան-
քը ղխում են վորպես յերկրորդական աշ-
խատանք և վոչ թե իրենց պետական գոր-

ծուենյության կարեւորագույն բնադավառ:

Այս պլենումը հրավիրված է կուսակ-
ցության Կենտրոնական Կոմիտեյի առա-
ջարկութեամբ: Պլենումին նախապատրաս-
տվելու գործը կատարվել է ընկերներ՝ Անդ-
րեյեվի և Մալենկովի անմիջական ղեկա-
վարութեամբ: Նրանք թախանցում էին
գործի բոլոր մանրամասնութիւնների ու
մանրունքների մեջ: Բազմաթիւ դրույցե-
րում ընկերներ Անդրեյեվը, Ժդանովը և
Մալենկովը լրջորեն և միանգամայն ճիշտ
քննադատում էին դպրոցում մեր տարած
աշխատանքի թերութիւնները, նրանք մատ-
նանշում էին, վոր ամբողջ կոմսոմոլը
դեռևս շրջադարձ չի կատարել ղեպի այդ
գործը, վոր կոմսոմոլի մեջ գոյութիւն
ունի դպրոցում տարվող աշխատանքի թե-
րազնահատում:

Համ Կ(բ)Կ Կենտկոմի քարտուղարները
մեզ տվին մի շարք սկզբունքային ցուցում-
ներ, վորոնք հանդիսանում են պլենումի
բոլոր ղեկուցումների հիմքը: Այդ ցուցում-
ները բոլջևիկյան ուղղամտութեամբ բացա-

Հայտում են մեր թերությունները և տալիս են աշխատանքի լայն ու կոնկրետ ծրագիր:

Մեր անմիջական պարտականությունն է—բոլշևիկոսին կատարել այդ ցուցումները և մոտակա ժամանակում ապահովել ամբողջ կոմսոմոլի արմատական շրջադարձը դեպի դպրոցում կատարվելիք աշխատանքը: 1940 թիվը պետք է դառնա բեկման տարի կոմսոմոլի վերաբերմունքի մեջ դեպի դպրոցը, վերջինիս ամբողջ աշխատանքը բարելավելու մեջ:

Ի հաստատումն այն բանի, Վոր մենք վատ ենք աշխատում դպրոցում, կարելի չե բաղմամբիվ փաստեր բերել: Ամենից լավ է այդ ցույց տալ կոմսոմոլի կազմակերպությունների կողմից դպրոցի արմատական և մճռական հարցերին ցույց տված վերաբերմունքի վերլուծության հիման վրա:

* * *

Դպրոցում գլխավոր դեմքը, կուսակցության և կառավարության վստահված անձը հանդիսանում է ուսուցիչը:

Մարքսիզմ—լենինիզմը գիտություն է համարում միայն այնպիսի գիտությունը, վորը չի խոնարհվում հնացած ապացույցների առջև, չի վախենում ջարդել հին, խարխուլ թեորիաները, այլ անընդհատ կատարելագործվում է, մարդկությանը հարստացնում է նոր գիտելիքներով: Առաջավոր գիտությունը—այդ մի գիտություն է, վորն անխղիչորեն կասկած է պրակտիկայի հետ: Պրակտիկայի հետ չկապված գիտությունն անպետք գիտություն է:

Ո՞վ պետք է մեր յերիտասարդ սերնդին դինի այդ գիտության հիմունքներով: Ո՞վ է ազդում ժողովրդական ինտելիգենցիայի կադրերի ստորաստման վրա, այն բանի վրա, թե ինչպես սյուրվա դպրոցականը վաղը պահպանելու և բաղմապատկելու յե սոցիալիստական սեփականությունը, դարգացնելու յե սոցիալիստական կուլտուրան, կոմունիստներն դաստիարակելու յե աշխատավորներին, կովելու յե թշնամու դեմ ի փոսս հայրենիքի, ի փառս կոմունիզմի: Իհարկե, մեծ չափով—ուսուցիչը:

Մենք կարող ենք մշակել տասնյակ և հարյուրավոր ամենահիանալի ծրագրեր, ամենակատարյալ ձեռնարկներ և դասազերքեր, բայց յեթե մենք չունենանք ուսուցիչ, վորն ընդունակ լինի ճիշտ դասավանդել այդ ծրագրերով, վորն ընդունակ լինի կուսակցական դիրքերից դործադրել այդ ձեռնարկներն ու դասազերքերը—վոչինչ դուրս չի դա:

Լենինը դեռ 1909 թվականին, Կապրի կղզու կուսակցական դպրոցի աշակերտներին զրած նամակում գրում էր, վոր ամեն մի դպրոցում ամենակարևորը դասախոսությունների զաղափարական-քաղաքական ուղղությունն է, վորն ամենից առաջ վորոչվում է դասախոսների կազմով:

1920 թվականի նոյեմբերի 3-ին Կանդես գալով քաղլուսավարների Համառուսաստանյան խորհրդակցությանը, Լենինն ասում էր. «...հարյուր-հազարավոր ուսուցիչներ — այդ մի ապարատ է, վորը պետք է շարժի աշխատանքը, գարթեցնի միտքը, պայքարի նախադաշարմունքների

դեմ, վորոնք դեռ մինչև հիմա դոյուլթյուն ունեն մասսաների մեջ»:

«Մենք պետք է հարյուր-հազարավոր պիտանի մարդիկ ի սպաս դենք կոմունիստական լուսավորությանը»:

Բոլշևիկյան կուսակցությունը հետևողականորեն և անչեղորեն կյանքում կենսագործել է Լենինի ցուցումներն ուսուցչի մասին: Այժմ ուսուցչությունը կազմում է խորհրդային ինտելիգենցիայի առաջավոր ջոկատը: Մեր ուսուցիչը սոցիալիզմի դարաշրջանի ամենակրթյալ և կուլտուրական մարդկանցից մեկն է, մի ամուր ուժ է, վորի վրա հենվում են կուսակցությունն ու կառավարությունը աճող սերնդի կոմունիստական դաստիարակության և ուսուցման զձով կատարած աշխատանքում:

Բոլշևիկյան կուսակցության հոգատարության շնորհիվ ուսուցիչը մեզ մոտ այնպիսի բարձրության է հասցված, վորի վրա նա յերբեք կանդնած չի յեղել: Աշխատանքի մեջ ձեռք բերած աչքի ընկնող հաջողությունների համար չորս հազար դյուլական

ուսուցիչներ արժանացան բարձր պատվի—
նրանք պարգևատրվեցին Խորհրդային Միու-
թեյան շքանշաններով և մեդալներով: Ժո-
ղովուրդը բազմաթիվ ուսուցիչների փորպես
իր ղեկավարներ ուղարկեց ԽՍՀՄ Գերա-
զույն Խորհուրդը և միութենական ու ավ-
տոնոմ հանրապետութիւններէ Գերագույն
Խորհուրդները, առաջադրեց տեղական
խորհուրդներէ ղեկավարութեան թեկնա-
ծուներ: Լավագույն ուսուցիչներէ անուն-
ները հայտնի յեն ամբողջ յերկրին:

Թվում է թէ մեզ, կոմսոմոլի աշխա-
տողներն համար, այստեղից յեզրակացու-
թյունը պարզ է: Մտալինյան հողատարու-
թյունը խորհրդային ուսուցչի մասին կոմ-
սոմոլի համար փայլուն որինակ է ծառա-
յում, նրան պարտափորեցնում ինչպես
հարկն է, բոլշեիկորեն ուղենլ ուսուցչին:

Առանց հարգանք տածելու ղեպի ուսու-
ցիչը, առանց հոգ տանելու նրա հեղինա-
կությունը բարձրացնելու մասին—անմիտ և
վոչ—լուրջ բան է՝ դատել զպրոցի հետագա
ամբայնդման մասին, աշակերտներէ առա-

ջաղխությունը և կարգապահությունը
բարձրացնելու մասին: Միայն կոմսոմոլի և
ուսուցիչներէ համատեղ աշխատանքը կա-
պահովի Համ Կ(բ)Կ XVIII համագումարի
կողմից զպրոցի առաջ դրած խնդիրների
կատարումը:

Գծրախտաբար, կոմսոմոլի կազմակեր-
պությունները չեն հասկանում ուսուցչի
հսկայական դերը: Ուսուցիչը չի ստանում
կոմսոմոլի պատշաճ ոժանդակությունը,
արժանավայել պատիվ ու հարգանք չի վա-
յելում կոմսոմոլում: Կոմսոմոլի կազմա-
կերպութիւնները չեն ճանաչում ուսուց-
չին, չեն խորհրդակցում նրա հետ, չեն
ուղնում նրան նրա լաբլած, պետութեան
համար կարևոր և՛ անհրաժեշտ աշխատան-
քում: Գեռ ավելին. ուսուցչի նկատմամբ
յերբեմն ցուցաբերվում է անհոգի, մախա-
յեմյան, խուլիգանական վերաբերմունք:

Ահա միքանի փաստեր:

Գորկու քաղկոմն այս ամբողջ տարվա
ընթացքում չի քննարկել ուսուցիչներէ աշ-
խատանքի հետ կապված և վոչ մի հարց:

Քաղկոմը չի ճանաչում ուսուցիչներին, չի հենվում նրանց վրա:

Վեց ամիս առաջ ՀամԼԿՅԵՄ Կենտկոմը լսեց Ռյազանի մարզկոմի ղեկուցումը ուսուցիչներին հետ շարվող աշխատանքի մասին: Ընդունվեց մի վորոշում, վորն ուսուցիչներին հետ մարզկոմի տարած աշխատանքը դտավ անբավարար: Մենք մարզկոմին առաջարկեցինք անհապաղ ուղղել թերությունները: Վերջերս կատարված ստուգումը ցույց տվեց, վոր այդ ցուցումը չի կատարված և ամեն ինչ մնում է առաջվա պես: Ռյազանի մարզի կոմսոմոլի կազմակերպությունները չեն աշխատում ուսուցչի հետ, նրան վոչ մի ոգնություն ցույց չեն տալիս: Ընթացիկ տարվա յերկու յեռամսյակի ընթացքում մարզում կոմսոմոլի մեջ են ընդունվել 65 ուսուցիչ միայն: Իացի այդ, 16 սայուններում կոմսոմոլի մեջ վոչ մի ուսուցիչ չի ընդունվել:

Ռյազանի մարզկոմը բացառություն չի կազմում: Մյուս կոմյերիտական կազմակերպություններում ել բացակայում է

ուսուցչի հետ տարվելիք աշխատանքը: Դրա ակնառու աղացույց է հանդիսանում կոմսոմոլի աճի ընդհանուր իջեցումն ի հաշիվ ուսուցչութան: 1939 թվի առաջին յեռամսյակում կոմսոմոլի մեջ ընդունվել են 10.061 ուսուցիչ, յերկրորդ յեռամսյակում — 8378, յերրորդ յեռամսյակում — 4093:

Ռոստովի մարզում 1938—1939 թվերի ընթացքում զպրոցներից հեռացվել են 410 ուսուցիչներ: Նիկոլայեվում բացարձակապես սխալ են բաշխել մանկավարժական բուհերի շրջանավարտներին: Այս յերկու փաստերն ել լուրջ, սկզբունքային նշանակություն ունեն: Սակայն Ռոստովի և Նիկոլայեվի մարզկոմներն այս փաստերի կողքով անցան, ըստ յերևութին, իրենց արժանապատվությունից ցած համարելով ուսուցչի բախտով զբաղվելը:

Սուլիզանական վերաբերմունքը դեռի ուսուցիչները յերևան է դալիս, մասնավորապես, նրանց անհիմն կերպով կոմսոմոլից վտարելու փաստերում: 1939 թվի հունվա-

րի 1-ից մինչև նոյեմբերի 25-ը, ՀամԿՅՅՄ Կենտկոմն ստացել է 278 բողոք՝ կոմսոմոլի շարքերից վտարված ուսուցիչներից: ՀամԿՅՅՄ Կենտկոմը, քննելով այդ բողոքները, 172 ընկերների վերականգնեց առանց տույժերի, 55-ին վերականգնեց զանազան տույժերով և հաստատեց հեռացման 51 դեպք միայն:

1939 թվի փետրվարի 11-ին Մարտիակի մարզկոմը կոմսոմոլից վտարեց Կոստրապովի շրջանի Լյաժմարինի վոչ-լրիվ միջնակարգ դպրոցի ուսուցիչ Ռոսպոպինին, իբր թե իր տրոցկիստ յեղբոր հետ կապ ունենալու համար: Ռոսպոպինի յեղբայրը 1938 թվականին կանչվել էր ԲԳԿԲ, իսկ առայնում ինչ-վոր մեկը լուր տարածեց, թե նա ձերբակալված է վարպես տրոցկիստ: Յեվ այդ բավական յեզավ ազնիվ ուսուցչին կոմսոմոլից հեռացնելու համար: Ուսուցիչը հավատացնում էր, թե իր յեղբայրը վոչ թե տրոցկիստ է, այլ ծառայում է Բանվորա-Պյոտղացիական Կարմիր բանակում, ուսուցիչը ներկայացրեց մի տեղեկանք, վոր

ուղարկել էր այն զորամասը, վորտեղ ծառայում էր նրա յեղբայրը: Բայց կոմսոմոլի մարզկոմն այնպես ել չհավատաց Ռոսպոպինին, իսկ տեղեկանքը համարեց կեղծ:

Որչոլի մարզկոմը կոմսոմոլից հեռացրեց Պոկրովսկի ռայոնի Ֆյոդորովսկի վոչ-լրիվ միջնակարգ դպրոցի ուսուցիչ Ռոմանովին, իբր թե հակահեղափոխական յելույթի համար: Իսկ ի՞նչը հիմք ծառայեց Ռոմանովին այդքան ծանր քաղաքական հանցանքի մեջ մեղադրելու համար: Ինչի՞ց էր յեխում մարզկոմը, խորհրդային ուսուցչին հաշվեդրելով ժողովրդի թշնամիների բանակում: Քննությունը ցույց տվեց, վոր մարզկոմն այդ բանն անելու վոչ մի իրավունք չուներ:

Լինելով կոլանտեսուլթյան վերստուգիչ հանձնաժողովի նախագահ, Ռոմանովը բողոքեց կոլանտեսուլթյան նախագահ Պոցելույի վրե զործողությունների դեմ, վորն ապորինաբար շրջանի միջանի աշխատողներին մթերքներ էր մատակարարում կոլանտեսուլթյան հաշվից:

Ի՞նչ պետք է աներ մարդկումը: Ի՜հարկե, պաշտպաներ Ռոմանովին, մատնացույց աներ Պոկրովսկի ուայկոմին խորհրդային ուսուցչին ցույց տրվող սխալ վերաբերմունքի համար, այդ փաստով վտարի հաներ կազմակերպութեանը, սովորեցներ նրան, թե ինչպես պետք է դնահատել խորհրդային ինտելիգենտին: Սակայն մարդկոմն անհրաժեշտ չհամարեց սուուգել նյութերը և անհիմն կերպով ուսուցչին վտարեց կոմսոմոլից:

Հարց է ծագում, ի՞նչ արժեն այն դեկավարները, վորոնք այդպես անհուգի յեն վերաբերվում դեպի մարդը, վորոնք թույլ են տալիս, վոր հալածվեն խորհրդային ինտելիգենցիայի, խորհրդային ուսուցչութեան կադրերը:

Հարց է ծագում, ինչի՞ վրա յե հիմնըված այդպիսի վոչ-կուսակցական վերաբերմունքը դեպի ուսուցիչը: Ինչո՞ւ կոմսոմոլի կազմակերպութեաններն անցնում են այն փաստերի կողքով, յերբ ուսուցչի հեղինակութեանը չի ամրապնդվում, այլ ընկ-

նում է, յերբ նրան չեն ողնում, այլ խանդարում են և դրանով վնաս են հասցնում խորհրդային դպրոցի ամրապնդմանը:

Միայն մեկ պատասխան կարող է լինել: Մեզանից վոմանք չեն հասկացել ընկեր Ստալինի ուսմունքն ինտելիգենցիայի մասին և դրանով իրենց պրակտիկ աշխատանքում վատ են դեկավարվում:

Ժամանակն է յուրացնելու, վոր առանց կոմսոմոլի և ուսուցիչների համերաշխ աշխատանքի, առանց սերտ կոնտակտի մեջ մտնելու նրանց հետ, առանց նրանց հեղինակութեանն ամրապնդելու, առանց հուտանելու նրանց դադափարահան մակարդակը և դործարար վորակավորումը բարձրացնելու մասին, առանց ողնելու նրանց առաջադիմութեան և կարգապահութեան համար մղվող պայքարում չի կարելի հույս դնել խորհրդային դպրոցի հետագա հաջողութեանների վրա:

Ուսուցչի նկատմամբ յեղած անուշադէր, անհուգի վերաբերմունքի փաստերը մինչև այժմ չեն վերացվել նաև ՌիՅՍՍՀ

Լուսժողովոմատում: Դրա պատճառներից մեկն այն է, վոր ժողովոմ ընկեր Տյուրկինը լիբերալ վերաբերմունք է ցույց տալիս նման յերևույթները կրողներին:

Մի ամբողջ շարք կուսակցական վորոշումներ, և առաջին հերթին Համ Կ(բ)Կ կենտկոմի վորոշումը պրոպագանդայի մասին, պահանջեցին, վորպեսզի Լուսժողովոմատն արմատապես վերակառուցեր ուսուցիչներին վորակավորումը բարձրացնելու սխտեմը, մասնավորապես հեռակա ուսուցման սխտեմը: Առանց իր վրա անխոնջ աշխատանք թափելու ուսուցիչը չի կարող հաջողութեամբ կատարել իր վրա դրված խնդիրները, չի կարող հաջողութեամբ դաստիարակել նոր սերնդին: Այն դրույթը, թե պետք է դաստիարակել հենց իրեն, դաստիարակին, նոր չէ և յերևի հայտնի յե Լուսժողովոմատի աշխատողներին:

Ռեժիստրում ատեստացիայի յենթարկված 612 հազար ուսուցիչներին 246 հազարըն անհրաժեշտ մանկավարժական կրթութիւն չունեն:

Ռեժիստրում 30 մարդերի տվյալները ցույց են տալիս ուսուցիչներին կրթութեամբ հետևյալ պատկերը (տոկոսներով).

բարձրագույն կրթութեամբ	—15,2
միջնակարգ կրթութեամբ	—61,5
յոթնամյա կրթութեամբ	—21,3
յոթնամյակից ցածր կրթութեամբ	—2

Այս թվերը խոսում են իրենց մասին: Նրանք ցույց են տալիս, վոր ուսուցիչներին դերակշռող մասը, յերիտասարդ մանկավարժներ են, վորոնք սուր կերպով զգում են ողնութիւն ստանալու, վորակավորումը բարձրացնելու, բարձրագույն մանկավարժական կրթութիւն ստանալու կարիքը: Իսկ ի՞նչպես է դրված ուսուցիչներին բիտեղիքները բարձրացնելու դործը:

Փաստորեն հեռակա ուսուցման դործը քայքայված է, և Լուսժողովոմատի կողմից այդ դործն ուղղելու փորձեր չեն յերևում: Ըստ վոչ-լրիվ տվյալների, Ռեժիստրում չեն ստվորում 150 հազար ուսուցիչներ: Հեռակայողների ավելի քան 30 տոկոսը չեն ներ-

կայանում սեսխաներին և կոնսուլտացիաներին: Հեռակայողների մազումը բուհերում հասնում է 17 տոկոսի, քանկուսումնարաններում—16 տոկոսի: Այսպիսի դրութիւնը հասցնում է պետական հսկայական միջոցները վատնելուն:

ՌՆՅԱՀ Լուսժողկոմատը պարտավոր է վճարահանորեն ձեռնամուխ լինել ուսուցիչների զաղափարական մակարդակը և դործարար վորակավորումը բարձրացնելու գործին: Կոմսոմոլի կադմակերպութիւններին խնդիրն է այդ բանում ոգնել ժողովրդական կրթութեան որդաններին:

Կուսակցութիւնը պահանջում է ուսուցչին ցույց տալ հոգատար, զգուշ, զգայուն վերաբերմունք: Մինչդեռ, Լուսժողկոմատի և ժողովրդական կրթութեան տեղական որդանների մեղքով բաղմաթիվ դեպքեր կան, յերբ ուսուցիչներին յերկույթերը ամսով աշխատաւարձ չեն վճարում: Այդ մասին են հաղորդում Նովոսիբիրսկի, Կալինինի, Վորոննեթի և ուրիշ մարզերից: Ոմսկի մարզում ուսուցիչներին արվող

պարաքը կազմում էր դեկտեմբերին 34 հազար ուրլի, Բաշկիրիայում—360 հազար:

Լուսժողկոմատի հանցանքով յերիտասարդ ուսուցիչները մեծ մասամբ թողնւած են իրենց բախտին, պատշաճ աջակցութիւն չեն դտնում: Ուսուցչուհի Սվինցովան, որինակ, աշխատանքի ուղարկեց Աշխաբադ: Նրան բնակարան խոստացան, բայց դանդան պատրվակներով այնպես էլ բնակարան չտվին: Բնակարանային պայմանները փոքրինչ տանելի դարձնելու անպատու գործերից հետո Սվինցովան ծախեց իր փոքրիկ դրադարանը և մեկնեց Մոսկվա:

Ե՛լ ավելի վրդովեցուցիչ փաստ կատարվեց ուսուցչուհի Բարբաբախի հետ: Կրասնոդարից նրան ուղարկեցին Դագստան: Այստեղ նրան բնակարան տվին առանց վատարանի, դռների ու շրջանակների, վատ կտուրով: Չնայած բաղմաթիվ խնդրանքներին, վոչ վոք չոգնեց Բարբաբախին բնակարանային պայմանները բարելավելու հարցում: Մահացաւ նրա յերեխան: Նա տասնյակ անգամ դիմեց Լուսժողկոմատ և,

վերջացնու, վորոչեց մեկնել անձնապես
բանակցելու համար: Փոխանակ ըստ եյու-
թյան քննելու այլ հարցը, Լուսժողկոմա-
տում նստած չինովնիկները Բարաբասին
պատասխանատուության յենթարկեցին պրո-
պուլի համար և հեռացրին աշխատանքից:

Կադրերին ցույց տրվող խուլիզանական
վերաբերմունքի նման փաստերը Լուսժող-
կոմատում յեզակի չեն: Դիմելով Լուսժող-
կոմատին դանդատներով, ուսուցիչները
հաճախ հանդիպում են անհոգության և
քաշքշուկի: Միջնակարգ դպրոցի վարչու-
թյունում այս տարվա մայիսից մինչև նո-
յեմբեր ընկած եյիւն 290 չքննված բողոքներ
և նամակներ: Վերջիվերջո Լուսժողկոմա-
տի աշխատողները մի պարզ յեւք դտան—
բողոքներն ու նամակները դցել արելով:

Ժամանակն է, վոր ընկեր Տյուրիկները
ըրջորեն ձեռնամուխ լինի Լուսժողկոմատում
կարգ ու կանոն հաստատելու, ուսուցչի
նկատմամբ յեղած հակալենինյան վերաբեր-
մունքի փաստերի լիկվիդացիայի պործին:

Ժամանակն է, վոր կոմսոմոլի կազմա-

կերպությունները փոխեն իրենց վերաբեր-
մունքն ուսուցչի նկատմամբ և բոլոր յեղ-
րակացություններն անեն ընկեր Ստալինի
ուսմունքից՝ խորհրդային ինտելիգենցիայի
մասին:

Ժամանակն է, վոր կոմսոմոլի կազմա-
կերպությունները հասկանան, վոր առանց
լիկվիդացիայի յենթարկելու ուսուցչի
նկատմամբ յեղած մախայեվական, հակալե-
նինյան վերաբերմունքի փաստերը, չի կա-
րելի սպասել, վոր բարեկամի դպրոցում
տարվող աշխատանքը:

Ժամանակն է, վոր կոմսոմոլի կազմա-
կերպությունները հասկանան, վոր հարկա-
վոր է ուսուցչին մոտեցնել կոմսոմոլին և
լիկվիդացիայի յենթարկել նրա մասին,
վորպես նեղ մասնազեռի, յեղած պատկե-
րացումը:

Ուսուցիչը \ կոմունիզմ կառուցողների
ամող սերնդի դաստիարակն է, — ահա այն
սկզբունքը, վորով մենք պետք է ղեկավար-
վենք՝ ուսուցչին ցույց տրվող վերաբեր-
մունքի մեջ:

* * *

Դպրոցի համար հետևյալ կարևորագույն հարցը, վորի կողքով չի կարող անցնել կոմսոմոլը, — դա աշակերտության կարգապահության և առաջադիմության հարցըն է :

Բարձր գիտակցական կարգապահությունը և կարգավերականգնողությունը նոր, սոցիալիստական հասարակության բնորոշ, անկապտելի գիծն է : Նա, այդ գիծը, յերեւում է ամենուրեք, — բանտիորների և դյուզլացիների ստախանովական աշխատանքի մեջ, ինտելիգենցիայի նվիրված աշխատանքի մեջ, կարմիր բանակի և Ռազմա-ծովային նավատորմի սքանչելի դործողություններում : Հայանի յե, թե ինչ հսկայական տարվորություն դործեցին կարմիր-բանակայինների կարգապահությունն ու կարգավերականգնողությունն Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի աշխատավորներին պանական լծից ազատագրելու համար մղվող պայքարի ժամանակ :

Կուսակցությունը ժողովրդի մեջ որեցոր աճեցնում ու դաստիարակում է կարգավերականգնողությունն ու կարգապահությունն : Հենց այդ սքանչելի ունակություններն է, վոր պետք է դաստիարակի դպրոցը : Պետք է ասել, վոր այստեղ արդեն քիչ բան չի արվել : Բայց այնուամենայնիվ շատ դժարություններում կարգապահությունը դեռ մնում է անբավարար : Դպրոցներում մենք ունենք առաջադրանքները չկատարելու, ուսումնական ուժիմը խախտելու, կախարհության, իսկ յերբեմն նաև խուլիգանության մասսայական փաստեր :

Ուսուցչի ցուցումներն ու առաջադրանքները պարտադիր են ամեն մի աշակերտի համար, դրանք նրա համար որենք են հանդիսանում : Մինչդեռ, աշակերտները հաճախ չեն կատարում ուսուցչի առաջադրանքները : Դեռ Խալելին — աշակերտներից վոմանք վիրավորում են ուսուցչիչներին, հաշվի չեն առնում նրանց :

1939 թվականի նոյեմբերի 10-ին 10-րդ

դասարանի աշակերտներն իրենց ուսուցչին ուղարկեցին մի «ուլտիմատում» հետևյալ բովանդակութեամբ.

«Բիմիայի դասատու Ա. Ս. Պանոփային:

Մենք, 75-րդ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտներս, մտածեցինք ձեր այն առաջարկութեան մասին, վոր դուք մեզ հրամայրիք ս. Թ. նոյեմբերի 10-ին, և յեկանք այն յեղբակացութեան, վոր մենք, ստորև ստորագրողներս, կատեզորիկ կերպով հրաժարվում ենք ստուգողական աշխատանք գրելուց, վորովհետև 1939 թվի 5/XI մենք դասին չենք յեղել: Ընդունեցեք դեպի Ձեզ տածած լիակատար հարգանքի մեր հազատիացումները: 10-րդ դասարանի աշակերտներ»:

Հետևում է 25 ստորագրութեան և այսպիսի հետդրութեան. «Առաջարկում ենք կատարել մեր խնդիրքը, այսինքն՝ ստուգողական աշխատանք չգրել և դասին այդ չհարցնել: Իսկ յերբ չեմ կատարի, այսս

մենք ձեռք կառնենք արդեն խիստ բնույթի միջոցներ»:

Կուլթիշեվի № 44 դպրոցի 5-րդ դասարանի աշակերտ Սավելյեվը խուլիգանութուն էր անում, խախտում էր դպրոցի ներքին կարգուկանոնը: Նրան համոզում եյին, վոր այդպես վարվել չի կարելի, խորհուրդ էյին տալիս պայմանադիր գրել և մրցման մեջ մտնել մյուս աշակերտներին հետ: Նա համաձայնվեց, իսկ մյուս ուրը յեկավ դասարան, բոլոր թանաքամանների մեջ կեր լցրեց և վիժեցրեց պարսպմունքը: Այսպես շարունակվում էր մի քանի օր: Այնուամենայնիվ կոմսոմոլի կազմակերպութեանը հանդիսա սպասում էր, թե Սավելյեվը յերբ կվորոշի «իրեն լավ պահել»:

Խուլիգանութեան, սանձարձակութեան, առաջադրանքները չկատարելու տարբեր անհամատեղելի յեն խորհրդային դպրոցականի կոչման հետ: Այս ամենն անցյալի մնացորդներն են, լիկվիդացիայի չենթարկված մանր-բուժուական դժերի և սովորութեանների հետևանքը, խորթ և հետամնաց

տրամադրուեթ յունեների ազգեցուեթ յունն աշակերաների վրա: Դժբախտաբար, կոմսոմոլի կազմակերպուեթ յունները հաճախ այս փաստերի վրա նայում են սրարզեցված ձեւով, դրանց մեջ չեն տեսնում սոցիալիստական համակեցուեթյան կանոնների կոպիտ խախտում, չեն դուռնում նոյն յերևույթների կապը մանկական հանցադրժուեթյան հետ, — իսկ մի շարք դեպքերում — թշնամական տարրերի կողմից աշակերաններին իրենց ցանցերը զցելու փորձերի հետ:

Այս տարվա տասն ամսյա ընթացքում Կուլքիչեվում քրեական պատասխանատուեթյան են յենթարկուել 354 դպրոցական: Սակայն կոմսոմոլի ռայկոմները, քաղկոմը և մարզկոմը մինչև այժմ դեռ մնում են դիտողների դերում. կոմսոմոլի կազմակերպուեթ յուններն այս անթուլլատրելի յերեւույթների դեմ վոչ մի դորժուն պայքար չեն մղում:

Ի՞նչպէս պետք է վորակաւորել նոյն վարժունքը: Կուլքիչեվի մարզկոմը քարչ է

դալիս դեպքերի պոչից, և վոչ թե դեկավարում դորժը: Նա ընտրել է ինքնահոտի դիրք, և վոչ թե դպրոցի կարգապահուեթյան համար վճռական պայքար մղելու դիրք: Մարզկոմի աշխատողները տվյալ դեպքում վեր են ածուել նախած չինույնիկների, վորոնք անտարբեր կերպով դրանցում են փաստերը:

Դպրոցի կարգապահուեթյան հետ անխղելիտրեն կապված են նաև առաջադիմուեթյան հարցերը: Դաստիարակուեթ յունն ու կրթուեթ յունը մի մեղալի յերկու կողմն են: Յեւ վոր դպրոցում անբավարար առաջադիմուեթ յուն կա, դրանում ամենից վառ կերպով արտահայտուում են մեր դաստիարակչական աշխատանքի թերուեթ յունները:

Անցյալ ուսումնական տարում ՌԽՅՍՀ դպրոցներում կային մեկուկէս միլիոն յերկրորդ տարեցիներ: Ժողովրդական կրթուեթյան որդանների տվյալների համաձայն նոր ուսումնական տարվա առաջին քառորդին առաջադիմուեթյան պատշաճ աճում չտուեց: Այսպէս, որինակ, Լենինգրադի

մարզի դպրոցներում առաջադիմությունը կազմում է միայն 75 տոկոս, Լենինգրադի դպրոցներում—78 տոկոս, Կալինինի մարզի 31-րդ ուսյոնի դպրոցներում—72 տոկոս:

Անհրաժեշտություն չկա ասպացուցելու, վեր աշտոնի բանը վոչ թե որչեփով պատճառներն են, այլ մենք, կոմսոմոլի աշխատողներս, ժողովրդական կրթության որդանները, կազմերը: Մենք քիչ դպրոցներ և մանկավարժներ չունենք, վերոնք չգիտեն, թե ինչ բան է յերկրորդաարեցի: Լենինգրադի մարզում 600 դպրոց, Կիրովի մարզում 100 դպրոց, Բելոռուսիայում 200 դպրոց վոչ մի յերկրորդաարեցի չունեն: Մոսկվայի մարզում ալեկի բան յերկու հարյուր ուսուցիչներ հասան բացարձակ առաջադիմության: Սարատովի մարզում այդպիսի ուսուցիչներ 1.000 հոգի յեն, Կույբիչևի մարզում—900 հոգի, Ուլրեկական իՍՏ-ում—4.500 հոգի:

Բանն ինչո՞ւմն է ուրեմն:

Բանն այն է, վեր մեր կոմսոմոլի կազմակերպությունները իսպառուկ կերպով

հաշովել են դպրոցում կատարվող կովարարության և խուլիզանության վաստերի հետ, աչակերտների վատ առաջադիմության հետ:

Բանն այն է, վեր մեր կոմսոմոլի կազմակերպություններն իրենց պատասխանատու չեն համարում յուրաքանչյուր յերկրորդաարեցու համար, կարգապահությունը իսխտելու յուրաքանչյուր դեպքի համար:

Բանն այն է, վեր մեր կոմսոմոլի կազմակերպությունները թերադնահատում են դպրոցը, նրա վրա նայում են վորպես յերկրորդական բնադավատի, և վոչ թե վորպես կոմսոմոլի ամբողջ պետական դործունեյության կարևորագույն մասի վրա:

Այս բանին անհրաժեշտ է վերջ դնել: Աչակերտների կովարարության և խուլիզանության վաստերի հետ, վատ առաջադիմության հետ, հաշովելը հանդիսանում է դպրոցի նկատմամբ բուրժուական վերաբերմունքի տարր: Հարկավոր է, վոր ամենամոտ ժամանակում ասպահովվի վճռական

բեկումն աշակերտները առաջադիմութեան և կարգապահութեան մեջ:

Կոմսոմոլն աշակերտներին պետք է պատվաստի պատասխանատվութեան զբաղմունք իրենց վարքի համար, աշակերտների ամբողջ մասսային դաստիարակի դեպի աշխատանքն ու հանրային սեփականութեանը կոմունիստական վերաբերմունքի վողով: Տնային առաջադրանքները չկատարելը, ծուլութեանը, անփութութեանը, դպրոցի դուլքը փչացնելը չեն կարող հասակով արդարացիվել: Այս ամենը բուրժուական դըպրոցի մնացորդներն են, և կոմսոմոլի ուղղակի պարտականութեանն է վճռականապես վերացնել դրանք:

Հարկավոր է աշակերտներին պարզաբանել, վոր դպրոցի դուլքը կտարելը, դըպրոցի շենքը փչացնելը նույնպես հանցազործութուն է, ինչպես մեքենաները ջարդելն ու փչացնելը գործարանում, կոլտնտեսութեանում:

Ուսման և հասարակական աշխատանքի

մեջ դպրոցականի մեջ ձևավորվում են կոմունիստական գիտակցութեան սաղմերը:

Իրենց ուսումնական և հասարակական առաջադրանքների ազնիվ, բարեխիղճ կատարումը, դպրոցական դուլքին դուրս վերաբերվելը, ներքին կարգապահութեանը, քաղաքավարութեանը, արտաքին մաքրութեանը պետք է լինեն խորհրդային դպրոցականի անկապտելի հատկութեանները:

Մենք պարտավոր ենք աշակերտներին դաստիարակել սոցիալիստական համակեցութեան կանոններն անսլոյսաբարձր պահպանելու վողով: Արժե այստեղ հիշատակել ընկեր Կիրովի խոսքերը.

«Հարկավոր է, —ասում եր նա, —դըպրոցներում կարգ ու կարգապահութեան սահմանել: 12 տարեկան յերեխաները հասկանում են իրենց արարքները և կարող են պատասխան տալ այդ արարքների համար: Հարկավոր է միայն հմտորեն մոտենալ նրանց»:

Պլենումի որակարգում դրված է դըպրոցի կանոնադրութեան նախադժի և աշա-

կերտութեան վարքի կանոնները հարցը: Այս դոկումենտները դարձողի համար մեծ նշանակութիւն ունեն: Հարկավոր է, վորպէսզի կոմսոմոլի կազմակերպութիւններն ապահովեն զրանց լիակատար կենսազոր-
ծումը:

* * *

Վերջին տարիների ընթացքում դարձողները կոմսոմոլի կազմակերպութիւններն անել ու կազմակերպութիւնն ամբողջովն են: Յետեւ առ 1936 թվի հունվարի 1-ը դըպրոցներում հաշվում էյին 18·833 սկզբնական կազմակերպութիւններ, վորոնք միավորում էյին 234·919 կոմյերիտական, ապա հիմա մենք ունենք 42·140 կազմակերպութիւն, վորոնք միավորում են ավելի քան մեկ ու կես միլիոն կոմյերիտական:

Այսպիսի հսկայական բանակը ճիշտ դեկավարվելու դեպքում ընդունակ է մեծ դեր խաղալ աճող սերնդի կոմունիստական դաստիարակութեան դործում, դարձողում առաջադիմութիւնը և կարգապահութիւնը բարձրացնելու դործում: Սակայն դարձողում

կոմսոմոլի աշխատանքի այժմյան դրութիւնը դեռևս շատ բանով չի համապատասխանում սոսալինյան յերրորդ հնգամյակի խնդիրներին: Դարձողների կոմսոմոլի կազմակերպութիւնները հետու յեն կանդեմ կարգապահութեան, առաջադիմութեան համար մղվող պայքարից: Սակայլ չեն այնպիսի դեպքերը, յերբ իրենք կոմսոմոլներն են հանդիսանում կարգապահութիւնը խախտողները և թույլ աշակերտները:

Ահա մի քանի որինակ:

Խարկովի № 10 դարձողում 786 աշակերտներից թույլ են 378-ը: № 64 դարձողում 916 աշակերտներից թույլ են 336-ը: Այդ դարձողի 56 կոմյերիտականներից 23-ը հետ մնացող աշակերտներ են:

Նման փաստերի թվարկումը կարելի յե շարունակել: Սակայն կոմսոմոլի կազմակերպութիւնները հաճախ անտարբեր են վերարբերվում զրանց, դործուն պայքար չեն մղում անկարգապահութեան, պարամուռները խուսափելու դեմ:

Պետք է հասկանալ, վոր դարձողում

աշակերտի անկարգապահ լինելը կարող է անդրադառնալ նրա հետագա աշխատանքի վրա: Յուրաքանչյուր աշակերտին հարկավոր է ներշնչել, վոր նա վաղվա պետական դործին է, Կարմիր բանակի վաղվա մարտիկը և հրամանատարը, վաղվա ստախանովականը և արդյունաբերութեան հրամանատարը: Այստեղ հարկավոր են վոչ թե Փոնյիլիզինի կոմեդիայի Միտրոֆանուշկայի նման տգետներ, ալլ կարգապահ և կըրթված, սոցիալիստական պետութեան աղնիվ և նախաձեռնող քաղաքացիներ:

Դպրոցում կոմսոմոլի կազմակերպութեան ամեն մի քայլը պետք է համակված լինի դպրոցի բախտով խորը շահագրգռվածութեամբ, պետք է թեւադրվի մի ճշգրտումով՝ անխոնջ ողնել կոլսակցութեանը դաստիարակելու կարգապահ և գրագետ խորհրդային քաղաքացիներ:

Յերբ մենք խոսում ենք արդյունաբերութեան կամ գյուղատնտեսութեան կոմյետիտականների պետական դործունեութեան մասին, ապա նկատի ունենք յերիտասարդու-

թեան մասնակցութեանն արտադրական պլանի կատարման, տեխնոլոգիան պահպանելու, աշխատանքի նոր մեթոդներ մտցնելու համար մղվող պայքարին:

Դպրոցի կոմսոմոլի կազմակերպութեան պետական դործունեութեանը վորոշվում է ամենից առաջ նրա մղած սրայքարով հանուն յերկաթյա դիտակցական կարգապահութեան, լավ և գերազանց առաջադիւմութեան: Կոմսոմոլ-աշակերտի համար գլխավոր դործը լավ և գերազանց սովորելն է:

Կոմսոմոլի բոլոր կազմակերպութեանները չեն, վոր հասկացել են այս պարզ ճշմարտութեանը: Այստեղից ել—խեղաթյուրումներ կոմսոմոլի դպրոցական կազմակերպութեանների աշխատանքում: Նրանցից միքանիսը կանգնում են սխալ ուղու վրա, փորձում են հրամայել, փոխարինել դպրոցի դեկավարութեանը, կոնտրոլ սահմանել ուսուցչի նկատմամբ: Զարմանալի չէ, վոր այս բանն անորմալ փոխհարաբերութեաններ է առաջացնում կոմսոմոլի կազմակեր-

սլուծյունների, դպրոցի ղեկավարութեան և ուսուցչի միջև :

Գորկու մարզի Ժդանովի ոսյոնի № 18 դպրոցում կոմսոմոլի կոմիտեյի քարտուղար ընկեր Կոպլիյովիչը փորձում եր դիրեկտորին և ուսուցչիններին արդեւել թվանշաններ ղեկու կոմսոմոլներին, մինչև վոր նրանց առաջադեմութունը քննարկվեր կոմսոմոլի ժողովում : Վիննիցայի № 4 դպրոցում կոմսոմոլի կազմակերպութունը վորոշում կայացրեց . «Աշխատանքից հանել Փիդիկայի ուսուցչուհուն, վորովհետև նա չի համապատասխանում իր կոչմանը, և վաղը նրան թույլ չտալ պարապմունքի» :

Նման փաստերը հասցնում են ուսուցչիններ և դպրոցի ղեկավարների հեղինակութեան խափանմանը : Այս բանի հետ մենք հաշտվել չենք կարող : Կոմսոմոլի կազմակերպութունները պետք է ամեն կերպ պաշտպանեն և ամրապնդեն դպրոցի ղեկավարութեան հեղինակութունը, հարզեն ուսուցչին : Դպրոցի դիրեկտորի և ուսուցչինների հետ համատեղ համերաշխ աշխատանք

տանելով միայն կոմսոմոլի կազմակերպութունը կարող է հասնել իր առաջ դրված խնդիրների ճիշտ կենսադորմանը :

Լսւըջ թերութուններից մեկն է հանդիսանում նաև դպրոցի կոմսոմոլի կազմակերպութեան վատ կապը պիտներական կազմակերպութեան և աշակերտական կոմիտեյի հետ : Յեւ այստեղ փոխանակ համաձայնեցված դործելու, յուրաքանչյուր կազմակերպութուն հաճախ հանդես է դալիս մեկուսացած, տնայնադործորեն և աշխատում : Դպրոցների կոմսոմոլի կազմակերպութունները վատ են ղեկավարում պիտներական ջոկատներին և աշակերտական կոմիտեյներին :

Առանձնապես հարկ է նշել աշակերտներին կոմսոմոլում ընդունելու ժամանակ տեղի ունեցած խեղաթյուրումների փաստերը :

Մեղ համար անխախտելի յե հանդիսանում կոմսոմոլի մեջ ընդունելութուն կատարելիս անհատական մոտեցման սկզբունքը : Մենք պարտավոր ենք սրբութեամբ պահպանել այդ սկզբունքը, ամեն կերպ

զաղափարապէս բարձրացնել կոմսոմոլի մեջ
ընդունովելու գործը, հասնել այն բանին,
վոր յուրաքանչյուր նոր ընդունվող մինչև
վերջը զիտակցի, վոր ՀամԼԿՅՅՄ-ի —բու-
չակիցան կուսակցութեան հախատարիմ սո-
նակիանի, նրա ամուր, մարտական ուղեբլբ
հանդիսացող կազմակերպութեան—անդամի
կոչումը շատ բան է պարտավորեցնում:

Փաստերը, սակայն, ասում են այն մա-
սին, վոր մեզ մոտ հաճախ այդ սկզբունքը
չեն պահպանում: Կոմսոմոլի առանձին դուր-
բոցական կազմակերպութեաններում դո-
յություն ունի թեթեամիտ, անպատասխա-
նատու մտակցում կոմսոմոլի մեջ ընդունե-
լություն կատարելու նկատմամբ:

Յերբեմն բավական է, վոր աշակերտը
դիմում զրի, ժողովում համառոտակի
սրտամի իր կենսադրութեանը, և նրան ար-
դեն ընդունում են կոմսոմոլի մեջ: Հաջի
չի աւնվում, թէ ընկերն ինչպէս է պարա-
պում, ինչպէս է նա իրեն սրահում դասե-
րին, արժանի յե արդյոք կոմսոմոլի կոչու-
մը կրելու բարձր պատվին:

Կուրսկի մարզի Մեդվենակի ուսյունի
միջնակարգ դպրոցի կոմսոմոլի ժողովում
կոմսոմոլի մեջ ընդունեցին 30 աշակերտ-
ների, վորոնց մեծամասնութեանն իրեն վո-
չընչով չէր ցուցաբերել ուսման և կարգա-
պահութեան մեջ:

Հարց է ծագում, դպրոցական յերիտա-
սարգութեան մեջ ի՞նչ հեղինակութեան կա-
րող է ունենալ, թող թույլ տրվի ասելու,
արդարիս կոմյերիտականը: Մի՞թէ սրբի չէ,
վոր կոմսոմոլում ընդունելութեան կատա-
րելուն ցույց տրվող նման մտակցումը չի
ապահովում կազմակերպութեան զաղափա-
րական ու կազմակերպական ամբաստնու-
մը, աշակերտները կրեկտիվում նրա դերի
ու հեղինակութեան բարձրացումը:

Մենք պետք է շարունակ հոգ տանենք
կոմսոմոլի դպրոցական կազմակերպու-
թեանների վորակական կազմը բարելավելու
մասին, հասնենք այն բանին, վոր
կոմսոմոլի մեջ լինեն այնպիսի աշակերտ-
ներ, վորոնցից բոլոր դպրոցականները կա-
րող են որինակ վերցնել, վորոնցից նրանք

կարող են սովորել թե՛ կարգապահութիւնն,
թե՛ առաջադիմութիւնն: Թող ամեն մի դըպ-
րոցական գիտենա, վոր կոմսոմոլի մեջ լի-
նելու իրավունքին նա պետք է արժանանա
աշխիւ սովորելով, դպրոցում, տանը,
փողոցում իր լավ վարքով, իր բարեխիղճ
վերաբերմունքով դեպի հասարակական
հանձնարարութիւններէ կատարումը:

Դպրոցի պայմաններում, վորտեղ ձե-
վավորվում է աշակերտների գիտակցու-
թիւնը, առանձնապէս կարևոր նշանակու-
թիւն ունի կոմսոմոլի ժողովը: Նա կոչված
է լինելու կոմյերիտական աշակերտների գա-
ղափարական, կազմակերպական դաստիա-
րակութեան իսկական դպրոցը: Կոմսոմոլի
ժողովը պետք է տոն տա բոլոր աշակերտ-
ներին:

Մենք չենք կարող ասել, վոր դպրոցնե-
րում կայացող կոմսոմոլի ժողովները հա-
մապատասխանում են այդ պահանջներին:

Հարցրեք ուղած դպրոցականին, թե
արդյոք նա դո՞ւ է ժողովից, նա ժողովում
ստացա՞վ արդյոք այն, ինչ սպասում եր:

Շատ ղեպքերում ձեզ արդարացի դժգոհու-
թիւն կհայտնեն: Կոմսոմոլի ժողովներում
ախուր է, այստեղ չի զգացվում յերիտա-
սարգական կրքոտութիւնը, նախաձեռնու-
թիւնը, այստեղ չեն քննարկվում սուր,
հուզիչ հարցեր: Մի՞թե կոմսոմոլի ժողո-
վում չի կարելի քննարկել այնպիսի հար-
ցեր, ինչպէս սոցիալիստական համակեցու-
թեան կանոններէ, սոցիալիստական բարոյա-
կանութեան, մտերմութեան հարցերը: Մի՞թե
չի կարելի դպրոցի կոմսոմոլի ժողովին հրա-
վիրել մի հին բանավորի, վորը պատմեր այն
մասին, թե ինչպէս էյին յերեխաները սո-
վորում ցարական Ռուսաստանի պայմաննե-
րում: Ինչո՞ւ կոմսոմոլի ժողովին չհրավիրել
մի մանկական դրողի, քննարկելու համար
նրա ստեղծագործութիւնը: Կոմսոմոլի ժո-
ղովում ինչո՞ւ չլինէլ նոր կինոֆիլմի մա-
սին: Յե՛վ բավական է դիմել իրենց՝ դպրո-
ցականներին, — վորքա՞ն հրատապ, հուզիչ
հարցեր կղենեն նրանք կոմսոմոլի կազմա-
կերպութեան առաջ:

Հարկավոր է ամեն կերպ բարձրացնել

դպրոցի կոմսոմոլի ժողովները դադարա-
բախտ մահարգակը, հասնել այն բանին,
վոր աշակերտներն անհամբերությամբ
ստրասեն այդ ժողովներին, սիրով դնան այդ
ժողովները, ակտիվորեն մասնակցեն դրանց
աշխատանքին և այնտեղից տանեն իրենց
համար ինչ-վոր նոր, ոգտակար բան: Ժո-
ղովը պետք է դադարաբախտ դաստիարակի
կոմյերիտականներին, ոգնի նրանց իսկական
կազմակերպիչ - մասսովիկների ունակու-
թյուններ մշակելու գործում:

Միջանի խոսք կոմսոմոլի խմբակ-
ների մասին: Մեր անուշադրության պատ-
ճառով այդ խմբակներն աշխատում են
սխալ, բյուրեղրատական մեթոդներով, չեն
կատարում իրենց գլխավոր խնդիրը—օգնել
ուսուցչին ուսումը կազմակերպելու և կար-
գապահությունն ամրապնդելու գործում:
Նմբակը կանոնադրական կազմակերպու-
թյուն չէ, այնինչ այստեղ վորոշումներ են
հանում, զանազան պլաններ են կազմում,
անվերջ նխատեր են անում:

Հարց է ծաղում, ինչու՞ մարդկումները

չեն դնում այս հարցերը: Վորովհետև
նրանք հետև չեն կանգնած դպրոցների կոմ-
սոմոլի կազմակերպություններից, ծանոթ
չեն նրանց աշխատանքին, չեն դեկավարում
նրանց:

Մեր մարդկումները, բացի զեկուցման
սկզբում ասածից, հաշվի չեն առնում նաև
այսպիսի վաստեր.

1. Վերջին ժամանակվա ընթացքում
Համ ԼԿՅՆՄ կազմում աշակերտների տոկո-
սըն զգալիորեն աճել է: Այսպես, որինակ,
Հայաստանում 89 հազար կոմյերիտական-
ներից աշակերտները կազմում են 29 հա-
զար: Տամբովի մարզում 70 հազար կոմյե-
րիտականներից 20 հազարն աշակերտներ են:

2. 1939 թվականի ինն ամսվա ընթաց-
քում միայն դպրոցներում ստեղծվել են
կոմսոմոլի ավելի քան 6 հազար նոր կազ-
մակերպություններ:

3. Կոմյերիտական-աշակերտների հիմ-
նական մասսան ստաժով յերիտասարդներ են,
դեռևս չեն կարողացել կոմյերիտական կոմի-
վածք, կազմակերպական փորձ ձեռք բերել:

Այս բանն ի՞նչ է պարտավորեցնում : Այն, վորպեսզի մեծ ուշադրութիւն դարձ-վի դպրոցներէ կոմսոմոլի կազմակերպու-թիւններին, արագացիւ նրանց դադախա-րական, կազմակերպական ամրապնդումը, ջանասիրաբար և համառօրեն, տառացիո-րեն ամեն ուր դրադիւնել նրանցով :

Սակայն կոմսոմոլի ռաշկոմները, քաղ-կոմները, մարդկոմները դերադասում են չմիջամտել դպրոցական կոմսոմոլի կազմա-կերպութիւններէ աշխատանքին :

Հարկավոր է դատաւարտել այդ վոչ-բողևելիկան մոտեցումը, ինքնահոսի այս դիրքը և արագօրեն ուղղել դպրոցական կոմ-սոմոլի կազմակերպութիւններէ ղեկավար-ման դործում յեղած թերութիւնները :

* * *

Անցնում եմ պիտներական կազմակեր-պութիւններին :

Ըստ վոչ-լրիվ տվյալների, մեզ մոտ հաշվվում են 13 միլիոն պիտներներ : Պիտե-րական ջոկատներն զգալի աշխատանք են

տանում յերեխաների կոմունիստական դաս-տիարակութիւնի դժով : Կուսակցութիւն և կոմսոմոլի ղեկավարութիւնը պիտներական ջոկատները հասարակական կյանքին մաս-նակից են դարձնում միլիոնավոր խորհրդա-յին դպրոցականներէ, լայնացնում են նրանց մտահորիզոնը, նրանց պատկաստում են սո-ցիալիստական համակցութիւնի ունակու-թիւններ, նրանց մեջ դաստիարակում են սեր ղեպի հայրենիքը : Մեր յերեխաներն ի դեմս պիտներներէ տեսնում են մի որի-նակ, վորը կոչում է ղեպի համառ աշխա-տանք և անխոնջ ուսում :

Կոմսոմոլի խնդիրն այն է, վորպեսզի մանկական կոմունիստական շարժման ամ-բողջ ուժն ուղղի դիտութիւնի հիմունքներին դերադանցօրեն տիրապետելու, դպրոցում դիտակցական կարգապահութիւնն ամրա-պնդելու համար մղվող պայքարի կողմը : Այնտեղ, վորտեղ պիտներական ջոկատները լավ են աշխատում, վորտեղ լիովին բավա-րարվում են յերեխաների բազմակողմանի պահանջները, վորտեղ ղեկավարները հմտո-

րեն զարթեցնում են յերեխաների ստեղծա-
դործական միտքը, զարգացնում են նրանց
ընդունակությունները, — այնտեղ սովորա-
բար բարձր առաջադիմություն կա և
ամուր, գիտակցական կարգապահություն:

Մենք կարող ենք արդյոք ասել, վոր
կոմսոմոլի կազմակերպություններն այժմ
ինչպես հարկն է ղեկավարում են պիոներա-
կան ջոկատները, վոր նրանք այդ ջոկատ-
ներին պատշաճ ուշադրություն են դարձ-
